

մակ մը: Անոնք պարտաւոր էին իրենց ստորագրութիւններով երեւիլ, եթէ ունէին, հետեւաբար դիմակներու չենք պատասխաներ), այս խօսքերը Հայ Մամուլին մէջ մեր հարցի մասին երեւան բերած կեցուածքի շուրջը՝ չբնականի խօսքեր թող չնկատուին: Երուսաղէմի Հայոց դարաւոր Աթոռը ծանր պարտականութիւններ ունենալով հանդերձ, կը սպասէ առնուազն իրաւունքի, արդարութեան զգացում մը՝ մեր ժողովուրդին միտքը առաջնորդելու կանխուած բոլոր սրտցաւ մարդերէն:

Եղէք այս Հաստատութեան նկատմամբ արդար՝ եթէ կը սիրէք կրօնական եւ ազգային այս Աթոռը: Գերագոյն եւ կարեւր արդարութիւնը ուրիշ բան չէ բայց եթէ գիտնալ հիմնական կարեւորութիւն ունեցող արժէքներուն զոհել մասնակի պարագաները: Արժէքներու նկատմամբ մեր այս անհասկացողութիւնն է պատճառը յաճախ, տրուած հարցերու շուրջ մեր թիւր եւ անխորժ աղմուկին:

Ս. ՅԱՆՈՒԹԻ ՆԵՐՍԷՆ

ՏՕՆ ԱԿԱՍՆՔ ԵՒ ԲԵՄԱԿԱՍՆՔ

* 9 Հոկտ. Եր. — Սուրբ Գեորգ. երէկ նախատեսակը՝ այսօր՝ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտոց Ս. Գեորգ եկեղեցիին մէջ, քարոզեց Տ. Գեորգ Վրդ., ներկայացնելով յանդգնութիւնը օրուան սուրբին, պաշտպանելու համար իր կրօնքը. նուիրումը՝ որով անկա տրամադրեց իր աշխուսական ծագումը տարածումին համար քրիստոնէական հաւատքին:

* 10 Հոկտ. Կիր. — Տօն Վարապալ Սրբոյ Խաչին. երէկ երեկոյն՝ «Հրաշափառ»-ով մուտքը, այսօր՝ առաւօտեան ժամերգութիւնը կատարուեցաւ ի Ս. Զարուիթիւն. Ս. Պատարագը Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ մատուցեց Տ. Կիրիլ Մ. Վրդ. որ եւ քարոզեց «Զի ճառ խաչին, կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ»՝ զօրութիւն յիշատուածոյ՝ բնաբանով, Օրուան տօնին աւանդութիւնը ներկայացնելով, ցոյց տուաւ որ եկեղեցին հաւատացեալներու մէջ կենդանի կ'ուզէ պահել Խաչին Խորհուրդը: Ու մարդիկ իրենց կեանքը պէտք է վարեն Խաչին ստուերին մէջէն:

* 17 Հոկտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զակար. քարոզեց Տ. Նորայր Վրդ., «Միաբան լերուք, խաղաղութիւն արարէք եւ Աստուած խաղաղութեան եւ սիրոյ եղիցի ընդ ձեզ» բնաբանով, ցոյց տուաւ թէ մարդիկ որքան հեռու են իրենց հոգիներուն մէջ ընդունելէ այդ Աստուածը: Մարդիկ սիրող են խոստովանան, շարութեան, խաբերայութեան, բայց քրիստոնէային հաւատքն է թէ ի վերջոյ հաստատուի պիտի աշխարհի մէջ խաղաղութիւնն ու սէրը ճշմարիտ Աստուծոյ:

* 23 Հոկտ. Եր. — Տօն Սրբոյ Թարգմանչաց Վարդապետաց. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զակար. քարոզեց Տ. Նորայր Վրդ., ներկայացրնելով գերը Թարգմ. Վարդապետներուն Ս. Գրիքի թարգմանութեան, կրօնական, ազգային եւ ի-

մացական հետաքրքրութիւններու տեսակետով:

* 24 Հոկտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զարուիթիւն, քարոզեց Տ. Պարգե Վրդ., «Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն» բնաբանով, ցոյց տուաւ ազօթքին դերը մարդու կեանքին մէջ, անկա որքան հնազանդութեան, ծառայութեան օգի մը ի յայտ կը բերէ ազօթքին մէջ, նոյնքան ներգործաբար ուժ եւ զօրութիւն կը դառնայ անոր հոգեկան, իմացական, փիլիքական ալ կարողութիւններուն զարգացման, աճումին մէջ, Ու ասոր համար, պէտք չէ ձանձրանալ ազօթքին:

* 7 Նոյեմբ. Կիր. — Գիւտ Խաչ. երէկ երեկոյ «Հրաշափառ»-ով մուտքը ի Ս. Զարուիթիւն կատարուեցաւ հանդիսացեալութեամբ Գեր. Տ. Արտաւազկ Արք. Սիրմէնեանի, որ Արքայան Պատրիարք Հօր հրաւերով Երուսաղէմ էր ժամանած, նախագահելու համար Գիւտ Խաչի տօնին հանդիսութեանց: Կիրակմուտքի ժամերգութիւնը եւ նախատեսակը Գիւտ Խաչի տեղի ունեցան Ս. Գրիգոր Լուսաւորիչ մեզ պաշտպան եկեղեցիին մէջ: Այսօր, նոյնպէս, Գիւտ Խաչին ժամերգութիւնը եւ Ս. Պատարագը մատուցուեցան Գիւտ Խաչի վայրին զրացեալութեան մէջ, Ս. Պատարագին քարոզեց Գեր. Տ. Արտաւազկ Արքեպս. «Զի ճառ խաչին, կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ իմաստութիւն յիշատուածոյ» բնաբանով, պարզեց խորհուրդը Խաչին ու Խաչեային, որոնք իրարմով կ'ամբողջանան, զիրար կը լրացնեն: Գիւտ Խաչը փառաւորումն է Խաչին ու անով արդիւնատուած հոգեւոր կեանքին ժողովուրդներու պատմութեան մէջ, Հայ ժողովուրդը ամենէն աւելի հաւատարիմ որդեկրն է Խաչին ու Խաչեայ Փրկիչին: Եւ ասիկա իրողութիւն է առաջին դարերէն իսկ քրիստոնէութեան:

Ս. Պատարագի աւարտումին կազմուեցաւ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին շուրջը, հանդիսացեալութեամբ Գերաշնորհ Սրբազանին:

— 9 Նոյեմբ. երեքշաբթի ցերեկին, Գեր. Տ. Արտաւազկ Արքեպս. Սիրմէնեան վերագործաւ իր Առաջնորդական պաշտօնին ի Պէյրութ: